

Ն. ՀՈՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՆՈՒՄ

ԱՎԵՏԻՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, ԼԵՎՈՆ ՄԻՄՈՆՅԱՆ, ԱՐՇԱԿ ԲԱԼՅԱՆ

1912-1914 թթ.՝ դիվանագիտական երկար ու ձիգ քննարկումներից հետո, Ռուսաստանի ակտիվ միջամտությամբ ավարտվում են ռուս-թուրքական բանակցությունները, և սուլթան Ռաշիդը (Մահմեդ 5-րդ) կարգադրում է ստորագրել Արևելյան Անատոլիայում (Արևմտյան Հայաստանում) կատարվելիք բարենորոգումների ծրագիրը, որը էապես տարբերվում էր ռուսների նախապես առաջադրած նախագծից¹:

Կ.Պոլսում Ռուսաստանի ժամանակավոր հավատարմատար Գուլկնիչի և մեծ վեզիր ու արտգործնախարար Սայիդ Հալիմի միջև 1914 թ. հունվարի 13/26-ին ստորագրված բարենորոգումների ծրագրի համաձայն՝ Արևմտյան Հայաստանի վեց նահանգներին միացվում էր Տրապիզոնի նահանգը², և այն բաժանվում էր երկու սեկտորների (չրջանների)՝ ա) Հյուսիսային, որի մեջ մտնում էին Էրզրումի, Տրապիզոնի և Մվազի նահանգները՝ Էրզրում կենտրոնով, բ) Հարավային, որի մեջ մտնում էին Վանի, Բիթլիսի, Դիարբեքիրի և Խարբերդի նահանգները՝ Վան կենտրոնով³:

¹ Հայկական բարենորոգումների մասին եղած բոլոր փաստաթղթերը, վավերագրերը և գրագրություններն ամփոփված են «Նարնջագույն գրքի» երկրորդ հատորում (տե՛ս «Сборникъ дипломатическихъ документовъ. Реформы в Арменіи 26 ноября 1912 г. - 10 мая 1914 г.», Петроградъ, 1915, էջ 162-165, հմմտ. «Ժողովածու դիպլոմատիկական դոկումենտների. Բարենորոգումները Հայաստանում 1912 թ. նոյեմբեր 12-ից մինչև 10 մայիսի», Թիֆլիս, 1915 թ.: Այս հատորի փաստաթղթերի որոշ մասը հրատարակել է «Արարատ» ամսագիրը 1915 թ. և Լեոն իր «Հայոց հարցի վաւերագրերը» (Թիֆլիս, 1915, էջ 330-340 և 342-357) աշխատության մեջ (տե՛ս նաև «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923)», Եր., 1972, էջ 158-365):

² Թուրքական կառավարությունն ինքն էր ուզել, որ Տրապիզոնը մյուս նահանգներին միանար, որպեսզի այդ շրջանը զուտ հայկական անունով քաղաքական միավոր չդառնար (տե՛ս Մ. Մ. Էպիդարթեան, Կեսանք մը ազգիս կեանքին մեջ, ականատեսի եւ մասնակցողի վկայութիւններ 1903-1923, Անթիլիաս, 1987, էջ 102):

³ Տե՛ս «Будущее устройство Арменіи (по официальнымъ даннымъ) (Третья оранжевая книга)», Петроградъ, 1915, էջ 79: Նման բաժանումով օսմանյան կառավարությունն անուղղակի կերպով ձգտում էր Եվրոպային ապացուցել, որ կայսրության մեջ չկա զուտ հայկական տարածք, հետևաբար հայերի համար չի կարող լինել բարենորոգումների հարց: Գերմանիան հասկացել էր, թե որքան էր օրեցօր ուժեղանում ռուսական ազդեցությունը Հայաստանի հյուսիս-արևելյան շրջանում՝ Էրզրումից մինչև Վան: Եվ որպեսզի թուլացներ ազդեցությունը այդ տարածաշրջանում, նա անհրաժեշտ էր համարում այն առանձնացնել Ռուսաստանից և միացնել գերմանական ազդեցության գոտուն: Այդ նպատակով նահանգները բաժանվեցին երկու հատվածների: Ռուսական

Յուրաքանչյուր շրջան, կամ նահանգ ունենալու էր Բարձր Դռան նշանակած առանձին նահանգապետներ, բայց նրանց կողքին պետք է գործեին քրիստոնյա, մեծ պետությունների կողմից ընտրված և Բ.Դռան հավանությանն արժանացած օտարերկրացի գլխավոր երկու տեսուչներ՝ որպես խորհրդականներ⁴։ Թուրքիայից առանձնացված հայկական ինքնավար շրջանները կառավարելու համար⁵։ Երկար պայքարից հետո Ռուսաստանին հաջողվում է բարենորոգումների ծրագրի մեջ մտցնել առանձին կետ, որ եթե վեճեր ու տարաձայնություններ լինեին նահանգապետի ու խորհրդականների միջև, ապա վճռական խոսքը կվերապահվեր խորհրդականներին⁶։

Ընդհանուր տեսուչներն իրավունք ունեին իրականացնելու երկու շրջանների վարչական, արդարադատության, օրենսդրական մարմինների, ոստիկանության, ժանդարմերիայի վերահսկողությունը, նշանակելու և արձակելու բոլոր պաշտոնյաներին՝ բացի երկու նահանգապետներից⁷, ստանձնելու իրենց շրջանի գործերի հրամանատարությունը և լուծելու հայ-քրդական հողային վեճերը⁸։

Այն դեպքում, երբ տասը տարվա ընթացքում ընդհանուր քննիչները պաշտոնները թափուր մնային, Բ. Դռուը նոր ընդհանուր քննիչների

ազդեցության գոտի հանդիսացող Վանի, Մուշի և Բիթլիսի նահանգները միացվեցին Դիարբեքիր-Մալաթիա-Շեքքիար երկաթգծին, որը հեռու էր ռուսական ազդեցությունից, որտեղ հայերը թվապես քիչ էին, և Թուրքիան պատճառ չունեի անհանգստանալու հայերի մեծամասնությունից։ Իսկ ռուսական ազդեցության հյուսիսային շրջանը՝ Էրզրումը, միանալով սևծովյան շերտին և Կապադովկիային, մտավ գերմանական ազդեցության գոտու մեջ (տե՛ս «Ազդակ» շաբաթօրեակ, Բեյրութ, 1980, փետրվարի 3, թիւ 3 (478), էջ 45)։

⁴ Դեռևս 1913 թ. ապրիլին Պետրոս Հալաճյանի տան մեջ Թալեաթի, Ջեմալի, Խալիլի հետ բանակցությունների ժամանակ Ակնունին, Հ. Շահրիկյանը, Գ. Փաստրամաճյանը, Վարդգեսը և Գ. Ջոհրապը քննարկում են տեսուչների նշանակման հարցը։ Գ. Ջոհրապն առաջարկում է, որ Բ.Դռուն ինքը քննիչներ առաջարկի եվրոպական երկրներից։ Դրան առարկում է Հ. Շահրիկյանը, որն իրավացիորեն կարծում էր, որ նման դեպքում քննիչները կգործեն թուրքերի թելադրանքով։ Հետագայում Խալիլը Գ. Ջոհրապի առաջարկը ներկայացրեց Ռուսաստանի դեսպանատուն, որը, սակայն, մերժվեց (տե՛ս **Ա. Ա. Ալպոյաճեան**, Անհետացող դեմքեր. Գրիգոր Ջոհրապ (իր կեանքը եւ իր գործը), Կ.Պոլիս, 1919, էջ 211-212)։

⁵ Տե՛ս **Анановъ І. Н.** Судьба Арменіи, М., 1918, էջ 20։

⁶ Թուրքերը չէին ուզում գեներալ-նահանգապետներին ենթարկել նոր նշանակված քաղաքացիական տեսուչներին, որն իհարկե կնվազեցներ առաջինների ազդեցությունը (տե՛ս **Ա. Օհանջանյան**, 1915 թվական. Անհերքելի վկայություններ (Ավստրիական վավերագրերը Հայոց ցեղասպանության մասին), Եր., 1997, էջ 63)։

⁷ Ժամանակին Ա. Մյասնիկյանը նկատել էր, որ տեսուչների կողմից շրջանների վարչական վերահսկողությունը իրական ոչ մի հետևանք չէր կարող ունենալ, քանի որ վարչության կարևոր ներկայացուցիչները նահանգապետները, միանգամայն անկախ էին տեսուչներից (տե՛ս **Ա. Մյասնիկյան**, Երկեր հինգ հատորով, հատոր 1, Եր., 1984, էջ 242)։

⁸ Կուսակալի հրաժարականը պահանջելու դեպքում ընդհանուր տեսուչները պետք է ստանային Բ.Դռան հավանությունը, և եթե այդ հավանությունը երեք օրից չլիներ, իրավունք ունեին կուսակալին էլ փոխելու։ «Ասիկա ամենաձանր հարուստն էր թուրք պետական վարչութեան» (**Մ. Մ. Էպլիդաթեան**, նշվ. աշխ., էջ 102)։

ընտրության համար պետք է դիմեր մեծ տերությունների աջակցությանը⁹:

Թուրքիան թեև ստորագրել էր համաձայնագիրը, բայց չէր շտապում իրականացնել ու կենսագործել նույնիսկ ռուսական բարենորոգումների խիստ փոփոխված գերմանական այդ տարբերակը: Թուրքիան մոտ երեք ամիս Գերմանիայի պատժամիջոցներով սակարկում էր տեսուչների ընտրության հարցը: Վերջապես 1914 թ. ապրիլի 2-ին ընդունվում են պետությունների կողմից առաջադրված հինգ թեկնածուներից երկուսը՝ հոլանդացի Լ. Վեսթենենկը և նորվեգացի Ն. Հոֆը¹⁰: Առաջինը նշանակվում է Ա շրջանի, իսկ երկրորդը՝ Բ շրջանի տեսուչ: Լ. Վեսթենենկը և Ն. Հոֆը հիանալիորեն էին ընտրված և, ինչպես Իզվոլսկին է նկատում, «հասկացել էին Ռուսաստանի աջակցության անհրաժեշտությունը»¹¹: Իսկ Ն. Ադոնցը եզրակացնում է. «Թվում է, թե սրանով նոր և խաղաղ կյանքի շրջան էր բացվում վերջապես հայերի համար

⁹ Տե՛ս **Յ. Շահրիկեան**, Հայկական ռեֆորմները Թուրքիայում, (առանց տպագրության վայրի, տպարանի և թվականի հիշատակությ.), էջ 124, նաև՝ **Ասում**, Բարենորոգումներու հարցը, 1-Պետական բարենորոգումներ, 2-Հայկական բարենորոգումներ, Կ.Պոլիս, 1914, էջ 99-101:

¹⁰ Տե՛ս «British documents on Ottoman Armenians», ed. by Bilâl N. Şimsir, vol. 3, էջ 548, նաև՝ «Будущее устройство Армении (по официальным дипломатическим документамъ Оранжевой книги), трактующей Реформы в Армении», Петроградъ, 1915, էջ 89: Համաձայնագրի ստորագրումից հետո ուժեղացան գլխավոր տեսուչների թեկնածությունների քննարկումները: Ռուսական կառավարությունը կազմում և տերությունների քննարկմանն է ներկայացնում Եվրոպայի չեզոք պետությունների պաշտոնյաներից ընտրված թեկնածությունները: Արևելյան Հայաստանում Հոլանդիայի մշտական ներկայացուցչի օգնական, հոլանդական գաղթավայր Բոռնեյի նախկին կառավարիչ Լ. Վեսթենենկը, Հոլանդիայի ռազմական նախարարության գլխավոր քարտուղար Դուռմանը, բրիգադի գեներալ-մայոր, բելգիացի Դը Գիզը, բելգիական Կոնգոյի նախկին փոխնահանգապետ Անրին, Նորվեգիայի ռազմական նախարարության գլխավոր քարտուղար, նախարարի օգնական, գնդապետ Ն. Հոֆը, որի թեկնածությունն առաջ քաշեց Ռուսաստանը 1914 թ. ապրիլի սկզբին (տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 60, թ. 7-8, նաև՝ «Международные отношения в эпоху империализма. Документы из архивов царского и Временного правительств, 1878-1917», серия 3 (1914-1917), т. 1, М.-Л., 1931, էջ 475-476): Թեև Մեծ Բրիտանիայի Արտաքին գործերի նախարարությունը որոշակի դժգոհություն արտահայտեց այդ հարցում Ռուսաստանի չափազանց ակտիվ մասնակցության համար, այնուամենայնիվ մարտի 10-ին Կ.Պոլսում Ռուսաստանի դեսպան Գիրսը հաղորդում է արտգործնախարար Ս. Սազոնովին, որ Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի դեսպանները հայտնել են իրենց կառավարությունների համաձայնությունը ներկայացված թեկնածությունների առնչությամբ: Եռյակ դաշինքի տերությունների հաստատումը ստանալուն պես, մարտի 24-ին, Կ.Պոլսում ավագ դեսպան, Ավստրո-Հունգարիայի ներկայացուցիչ Պալլավիչինին Բ.Դոնան քննարկմանն է ներկայացնում թեկնածությունների ցուցակը (տե՛ս **Ա. Օհանջանյան**, նշվ.աշխ., էջ 60): Փետրվարի սկզբին Մալլետը հաղորդում է Գրեյին, որ հայոց առաջնորդարանը չի ցանկանում ընդունել բելգիացիների թեկնածությունները, քանի որ Բելգիան որոշակի տնտեսական շահեր ունի Թուրքիայում, ինչը կարող է, ըստ հայերի, «վնասակար լինել իրենց անկախության համար»: Հետաքրքրական է, որ նույն կարծիքին էր նաև Բ. Դոնը, սակայն այլ պատճառով: Նա հայտարարել էր, որ այդ պարագայում «Թուրքիայի մահմեդականները հայտնվելու են նույն մակարդակի վրա Կոնգոյի նեգրերի հետ» (**Ա. Կիրակոսյան**, Բրիտանական դիվանագիտությունը և արևմտահայության խնդիրը (XIX դարի 30-ական թթ. - 1914 թ.), Եր., 1999, էջ 426):

¹¹ **Davidson Roderic H.**, The armenian crisis, 1912-1914, New York, 1948, p. 24.

Թուրքիայում՝ համերաշխ գործակցության գետնի վրա»¹²:

Մինչև տեսուչների միջև հայկական հատվածների բաժանումը Վանգենհայմը Թալեաթի հետ համաձայնության էր եկել այն բանի շուրջ, որ հյուսիսային հատվածը՝ Տրապիզոնը, Սվազը և Էրզրումը ենթարկվեն նորվեգացի Ն. Հոֆին: Դրանով գերմանացի դիվանագետը ցանկություն ուներ այդ հատվածը պահել գերմանական ազդեցության ներքո: Ուստի Հոֆն ապշած մնաց, երբ այդ հատվածը բաժին ընկավ Լ. Վեստենենկին¹³:

Լ. Վեստենենկը հուլանդացի էր, երկար ժամանակ պաշտոնավարել էր Հոլանդական Կոնգոյում, փորձառու վարչագետ էր, կասկածամիտ, զգույշ, ազնիվ և անկաշառ բնավորությամբ, տիրապետում էր ֆրանսերենին, անգլերենին և գերմաներենին¹⁴: Իսկ Ն. Հոֆը ամուրի գնդապետ էր, երկար ժամանակ վարել էր զինվորական և վարչական պաշտոններ: Նա 1910 թ. աշխատել էր երկրի պաշտպանության նախարարությունում որպես պետական քարտուղար և նորվեգական ռազմական դպրոցում իրավագիտություն էր դասավանդել¹⁵: Վարչական գործերի մեջ նա անփորձ, բնավորությամբ մեղմ մի անձնավորություն էր¹⁶: Նրա մասին Կ. Պոլսի հայոց պատրիարք Ջ. արք. Եղիայանն իր 1914 թ. փետրվարի 17-ի շրջաբերականում նշում էր. «Պ. Յոֆֆը զինուորական է, վարչական գործերու մեջ կը թուի անփորձ ըլլայ, բնավորութեանը մեղմ եւ քիչ մը թոյլ անձի տպաւորութիւն կը թողու»¹⁷, «բայց կը յուսանք թէ բացուի քիչ աստենէն եւ խելացի կառավարող մը ըլլայ: Անոր ազնուութիւնը եւս ամէն կասկածէ վեր է: Գիտէ բավականաչափ ֆրանսերէն միայն: Այսպիսի յատկութիւններով անձեր հարկաւ շատ օգտակար պիտի կրնան ըլլալ եթէ գիտնանք նրբութեամբ, խոհեմութեամբ օգտագործել զանոնք»¹⁸:

Իրականում Ն. Հոֆը, ինչպես արխիվային վավերագրերից մեկն է փաստում, ոչ մի պատկերացում չունէր թուրքական պետական կառավարման և ոչ էլ պետական պաշտոնյաների գործելակերպի մասին: Դեռ ավելին՝ «բացարձակապէս ոչինչ նա չգիտէր Հայկական հարցի մասին»¹⁹:

¹² Ն. Ադոնց, Հայաստանը և հայկական գաղթօջախները, Երկեր, Զ (լրացուցիչ) հատոր, Եր., 2012, էջ 272:

¹³ Տե՛ս Ա. Օհանջանյան, նշվ. աշխ., էջ 65:

¹⁴ Տե՛ս Յովհ. առ. քհ. Հաճեան, Հայոց տաժանքի ճամբաներով, Ա հատոր, Թեհրան, 1965, էջ 342-343:

¹⁵ Տե՛ս Ն. Զառույ, Գերմանական կայսրությունը և Հայկական հարցը (1878-1914), ատենախոսություն՝ ներկայացված Քյոլնի համալսարան՝ փիլիսոփայական գիտությունների դոկտորի աստիճան հայցելու համար, Քյոլն, 1990, Եր., 2008, էջ 209:

¹⁶ Տե՛ս Գ. Լազեան, Հայաստանը և հայ դատը (վավերագրեր), Գահիրե, 1946, էջ 170-171:

¹⁷ Մատենադարան, Ա. Ալպոյաճյանի ֆոնդ, թղթ. 5, վավ. 11⁸¹:

¹⁸ ՀԱԱ, ֆ. 54, ց. 5, գ. 60, թ. 8:

¹⁹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 676, թ. 143:

Կ.Պոլլում Ռուսաստանի դեսպան Գիրսի հանձնարարականով պատրիարքարանի Ապահովության հանձնախումբը Եղիշե արք. Դուրյանի գլխավորությամբ կապ է հաստատում Պետերբուրգում գտնվող Հ. Ջավրիևի հետ, որպեսզի նա իսկույն մեկնի Եվրոպա և Լոնդոնում Հարություն Մոստիջյանի միջոցով տեսակցություն կազմակերպի երկու քննիչների հետ²⁰:

Լ. Վեստենենկի և Ն. Հոֆի ժամանման նախօրյակին երիտթուրքական կառավարությունը բոլոր հնարավոր միջոցները ձեռնարկեց, որպեսզի օտարերկրյա հյուպատոսություններն ու փոխհյուպատոսությունները հեղեղվեն թուրքական լրտեսներով ու գաղտնի գործակալներով: Միաժամանակ զանազան մեքենայություններով նրանք կազմակերպեցին Լ. Վեստենենկի և Ն. Հոֆի դեմ ուղղված թշնամական ցույցեր²¹:

Նախատեսված էր, որ Ն. Հոֆի հետ Կ.Պոլլում հարաբերությունները պահպանելու էր Վանի պատգամավոր Ա. Վոսմյանը²², իսկ Վանում՝ Արամ Մանուկյանը²³:

Երկար ժամանակ ձգձգվում էին տեսուչների վարձատրման զինվորական ու քաղաքական իրավունքների և լիազորությունների հաստատման հարցերը, մինչև որ 1914 թ. մայիսի 6-ին իշխանությունները տեսուչներին սպառնում են, որ թողնեն Կ. Պոլլը: Մեկնելուց առաջ՝ մայիսի 8-ին նրանք այցելեցին Ջավեն պատրիարքին՝ «մեծ խանդավառությամբ ստեղծելով հայկական շրջաններում մեջ»:

Որոշակի սպառնալիքներից հետո՝ մայիսի 10/23-ին տեսուչների և ներքին գործերի նախարար Թալեաթի միջև կնքվում է նախնական պայմանագիր, իսկ մայիսի 17-ին նրանց են հանձնվում մայիսի 10/23-ին օտար դեսպանատների և թուրքական կառավարության կողմից պատրաստված իրենց գործունեության հիմնական դրույթները՝ «Հրահանգներ ընդհանուր քննիչներու իրաւասութեանց եւ ձեռնհասութեան մասին»²⁴ ու արտոնագրերը:

23 հոդվածներից բաղկացած այդ հրահանգների համաձայն՝ ընդհանուր քննիչները պետք է իրենց գործունեության կենտրոն հաստա-

²⁰ Տե՛ս Դոկտ. Խ. Ջաւէն Արզումանեան, Ազգապատում, Դ հատոր, Ա գիրք (1910-1930), Նիւ Եորք, 1995, էջ 100:

²¹ Տե՛ս Մ. Ե. Մարտիրոսյան, Հայկական բարենորոգումների իրագործման ձախուղումը Օսմանյան կայսրությունում 1914 թ., «ԲՀԱ», 1989, թիվ 3, էջ 177:

²² Տե՛ս Մ. Մ. Էպլիդաթեան, նշվ. աշխ., էջ 114:

²³ Տե՛ս «Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար», ԺԱ հատոր, Պէյրութ - Յունուար, 2015, էջ 294:

²⁴ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 28, թ. 97-102, նաև՝ Դոկտ. Խ. Ջաւէն Արզումանեան, նշվ. աշխ., էջ 101: Բ. Դոնան կողմից 1914 թ. մայիսի 10/23-ին ստորագրված՝ «Հրահանգներ ընդհանուր քննիչներու իրաւասութեանց եւ ձեռնհասութեան մասին (հարազատ թարգմանութիւն ֆրանսերէն բնագրէն)»: Ավելի հանգամանորեն տե՛ս «Մ. Էջմիածինը և Հայոց ցեղասպանությունը», Մ. Էջմիածին, 2010, էջ 280-288, հմմտ. «Նիւթեր Հ. Յ. դաշնակցութեան պատմութեան համար», ԺԱ հատոր, էջ 60-67:

տեին այն քաղաքը, որն ամենից ավելի էր համապատասխանում իրենց պաշտոնավարման պահանջներին: Քննիչներն իրենք պետք է նշանակեին քննությունների ժամանակն ու ձևը և ամեն ամիս պարտավոր էին ներքին գործերի և դատական նախարարություններին ներկայացնել իրենց շրջանների մասին տեղեկագիր: Նրանց պիտի ենթարկվեին շրջանի դատական, ոստիկանական և ժանդարմական վարչությունները: Եթե հանրային ապահովության ուժերը չբավականացնեին, քննիչների պահանջով զինվորական ուժերը պետք է դրվեին իրենց տրամադրության տակ:

Քննիչները պետք է հսկեին իրենց շրջանների վարչական, արդարադատության, ոստիկանության և ժանդարմերիայի գործերին վերաբերող օրենքների գործադրությունը և միաժամանակ Բ. Դռանը պիտի ներկայացնեին օրենքների բարեփոխումների նախագծեր, իրենց շրջանի վաչկատուն ցեղերի մասին մասնավոր կանոնագծեր, բարելավելին ազգային և հողային հարաբերությունները տարբեր ժողովուրդների միջև և ապահովեին նրանց իրավունքների հավասարությունը և ազատությունը:

Ընդհանուր քննիչների պարտականությունների մաս էր կազմում մարդահամարի անցկացումը: Նրանք պետք է հսկեին, որ Վանի և Բաղեշի նահանգների ընդհանուր ժողովների (Մեջլիսի ումումի) և նահանգային խորհուրդների (Էնճյամեն) ընտրովի անդամների թվում մահմեդականները և քրիստոնյաները լինեին հավասար:

Քննիչները կարող էին պաշտոնանկ անել իրենց աշխատանքի մեջ թերացած պաշտոնյաներին և նույնիսկ վալիին:

Իրենց գործառնությունների կատարման համար յուրաքանչյուր քննիչի տրամադրության տակ էր դրվում դիվանապետ-քարտուղար, մեկ քննիչ՝ քաղաքային, ոստիկանական և ժանդարմական գործերի, մեկ քննիչ՝ դատական գործերի, մեկ քննիչ՝ հանրային կրթության համար, օտար կամ թուրք մեկական մասնագետ երկրագործության և հանրօգուտ շինությունների համար, ժանդարմերիայից ընտրված մեկ թիկնապահ, հայերենի և քրդերենի թարգմանիչներ և անձնական օտար քարտուղար²⁵:

Ըստ Կ.Պոլսի հայոց պատրիարք Զավեն արք. Տեր-Եղիայանի 1914 թ. փետրվարի 17-ի շրջաբերականի՝ քննիչների հրահանգները պիտի բխեին 1914 թ. հունվարի 26-ի համաձայնագրից, մինչդեռ այն հակասում էր դրան²⁶:

Շուտով երկու տեսուչները վերադառնում են իրենց երկրները՝ անձնական գործերը կարգավորելու և նոր պաշտոնավայրեր մեկնելու

²⁵ Ավելի հանգամանորեն տե՛ս «Նիթեր 2. Յ.Ղաշնակցութեան պատմութեան համար», հատոր ԺԱ, էջ 60-67, նաև «Ս. Էջմիածինը և Հայոց ցեղասպանությունը», էջ 288:

²⁶ Տե՛ս շԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 60, թ. 5:

համար²⁷, որը նախատեսվում էր մինչև հուլիսի 5-ը: Բ. Դուռը, որն արհամարհանքով էր արտահայտվում տեսուչների մասին և չէր պատրաստվում աջակցել նրանց²⁸, համաձայնագրի ստորագրումից հետո հայտարարեց, որ այդ վերաքննիչներին դիտում է ոչ թե Եվրոպայի ներկայացուցիչներ, այլ իբրև օսմանցի պաշտոնյաներ²⁹:

Տեսուչները հունիսի կեսերին վերադառնում են Կ.Պոլիս և մի քանի օր զբաղվում օգնականներ ու թարգմանիչներ ընտրելով³⁰: Երբ Լ. Վեստենենկը հունիսի 20-ին ընտանիքով տեղափոխվեց Կ.Պոլիս, նա իր գործընկեր Լ. Հոֆին գտավ լրիվ փոխված: «Ինձ համար, - գրում է նա, - պարզ դարձավ, որ Հոֆն ամբողջովին միաբան էր թուրքերի հետ: Թուրքերը նրա քթից բռնած իրենց ուզածի պես ման էին ածում»³¹:

Նախապես որոշված էր, որ Լ. Հոֆի օգնականներից մեկը պետք է լիներ Արմեն Գարոն: Այդ մասին իր հուշերում պարզաբանում է Սողոմոն Թեհլերյանը: Սակայն 1914 թ. հունիսի 4-ին Թալեաթի, Ա. Գարոյի և Ա. Վռամյանի հանդիպման ժամանակ Թալեաթը, ներկայացնելով Հոֆի հետ իր բանակցությունների արդյունքները, խոստովանում է, որ ինքն է անձամբ մերժել Ա. Գարոյի թեկնածությունն այն պարզ պատճառով, որ եթե նա դառնար Լ. Հոֆի օգնականներից մեկը, ինչպես հենց Ա. Գարոն է նշում, իրականում ընդհանուր քննիչը «ես պիտի ըլլայի»³²:

Արդեն 1914 թ. մայիսի վերջին Հոֆի հայերենի թարգմանության դիվանապետի պաշտոնը հանձնվել էր Մատթեոս Էպլիդարյանին, որին մինչ այդ նախատեսվում էր հանձնել Վանի նահանգապետության դատական գործերի խորհրդականի պաշտոնը³³: Սակայն այդ նշանակումը կարող էր դժգոհություն առաջ բերել մահմեդականների շրջա-

²⁷ Տե՛ս «Իտալիայի Արտաքին գործերի նախարարության պատմական դիվանագիտական արխիվի վավերագրերը Հայկական հարցի մասին 1913-1923 թթ.», հատոր Ա 1913-1917, նյութը հավաքեց, կազմեց, թարգմանեց, առաջաբանը գրեց և հրատարակության պատրաստեց Արամայիս Բալոյանը, Եր., 2008, էջ 134:

²⁸ Տե՛ս **Heller J.**, *British Policy Towards the Ottoman Empire, 1908-1914*, London, 1983, էջ 110:

²⁹ Տե՛ս **Ա. Զօպանեան**, Հայաստանը թուրք լուծին տակ. Բանախոսութիւն, արտասանած Փարիզ, 25 մայիսի 1915-ին, Պոստոն, 1918, էջ 37:

³⁰ Ըստ ընդհանուր քննիչների իրավունքների և ձեռնհասության վերաբերյալ Բ.Դռան հրահանգների 23-րդ հոդվածի՝ ընդհանուր քննիչներից յուրաքանչյուրին իրենց գործառնությունը կատարելու համար հատկացվելու էին մի ընդհանուր քարտուղար-դիվանապետ և բավարար թվով խմբագիրներ, թարգմանիչներ, գրագիրներ և ծառայողներ, մեկական քննիչներ քաղաքացիական, ոստիկանական, ժանդարմական, դատական գործերի, հանրային կրթության, երկրագործության, հանրային աշխատանքների համար, թիկնապահ, անձնական քարտուղար, քրդերենի և հայերենի թարգմաններ (տե՛ս «Ս. Էջմիածինը և Հայոց ցեղասպանությունը», էջ 288):

³¹ **Ա. Օհանջանյան**, նշվ. աշխ., էջ 63:

³² «Թեհլիբեան արդարահատոյցը», Լիբանան, 1981, էջ 43:

³³ Ըստ փոստի նախարար Ռսկան Մարտիկյանի տեղեկությունների՝ մարզպանին կից բոլոր պաշտոնյաների թեկնածությունը մեկ առ մեկ քննարկում էր ոչ միայն կառավարությունը, այլև «Ֆըրզան» իթթիհատական խմբավորումը, քանի որ բոլորին էլ պարզ էր «...այն ամեն բարիքը, զոր ան իրաւամբ կրնար սպասել մարզպաններէն» (**Ս. Ս. Էպլիդարեան**, նշվ. աշխ., էջ 104, 106):

նում: Թալեաթի միջամտությունից հետո կենտրոնը որոշում է դատական գործերի խորհրդականի պաշտոնը հանձնել Բաղեշի վերաքննիչ ատյանի նախագահին, իսկ թարգմանության դիվանապետ նշանակել Մ. Մ. Էպլիդաթյանին: Թեև թարգմանության դիվանապետը պաշտոնով ցածր էր վերաքննիչ ատյանի նախագահից, սակայն այն քաղաքային քննիչին կամ կառավարչին՝ մյութեսարիֆին համահավասար պաշտոն էր: Այդ նշանակման մասին Մ. Մ. Էպլիդաթյանը հիշում է. «Չորսհինգ օր յետոյ կուսակալը կրկին կանչեց զիս եւ բացատրութիւններ տուաւ Պոլսոյ անցուդարձերուն մասին: Քիւրտ երեսփոխանները... բուն կերպով բողոքած էին, ըսելով որ ինչո՞ւ թարգմանութեան դիւանին պետք հայ մը պիտի ըլլար: Կ'երեւի, գործերը այնպիսի հանգամանք առած էին Պոլիս, որ ամէն մէկ ազգ աչալուրջ գործի լծուած, չէր ուզեր որ մէկը միւսին վրայ ամենէն պզտիկ առաւելութիւն մը ձեռք բերէ: Եւ որպէսզի հայի եւ քիւրտի տեսակետները հաշտուէին, որոշուած էր երկու դիւան կազմել եւ երկու պետ նշանակել՝ նոյն աստիճանով: Կուսակալը ըսաւ. «Կառավարութիւնը կը պնդէ քու մասին, եւ կ'ուզէ որ ընդունիս հայերէնի թարգմանութեան դիւանապետութիւնը: ...Գիտցիր ուրեմն որ երբ ընդհանուր քննիչը հոս գայ, ով որ գրաւոր դիմում մը կատարէ անոր, ասիկա քու խողովակովդ պիտի ըլլայ. դուն իր ականջը պիտի ըլլաս: Ինք կարճ ժամանակի մէջ պարտաւոր է, ըստ պայմանագրի՝ թրքերէն սորվիլ եւ կարենալ այդ լեզուով յարաբերուիլ: ...Քանի քատրին մէջ իրեն անձին յատկացուած թարգման մը գոյութիւն չունի, հաւանաբար այդ գործն ալ դուն պիտի ընես...: Մեզի առաւելապէս շահագրգռողը հայերուն հետ կապ ունեցող խնդիրներն են», եւ քմծիծաղով մը աւելցուց - «ահա քեզի հայերու ՔՈՆՍՈՒՈՍ կ'ընենք եւ դուն դեռ նա զ կ'ընես»³⁴:

1914 թ. հուլիսի 2-ին գնդապետ Ն. Հոֆն իր հրաժեշտի այցելությունն է կատարում Կ. Պոլսի հայոց պատրիարքարան³⁵, ապա, ի տարբերություն Լ. Վեստենենկի, որը չհեռացավ Կ. Պոլսից, նա Տրապիզոն-Կարին-Արճեշ ճանապարհով ուղևորվում է իր պաշտոնավայրը Վան³⁶:

Տեսուչների նշանակումներից և նախապատրաստական աշխատանքներից հետո կուսակալները, այդ թվում նաև Թահսինը, ներքին գործոց նախարարությանը ներկայացրին իրենց հրաժարականները: Սակայն Թալեաթը, հաշվի առնելով Վանի կուսակալ Թահսինի հայրենասիրությունը և նրա հետ իր անձնական մտերմությունը, խորհուրդ է տալիս «աւելի քան երբեք աչալուրջ եւ գոհաբերող ըլլալ»³⁷:

Նախքան Ն. Հոֆի ժամանումը Վան՝ 1914 թ. հուլիսի 10-ին՝ Օս-

³⁴ Մ. Մ. Էպլիդաթեան, նշվ. աշխ., էջ 105:

³⁵ Տե՛ս Դոկտ. Ի. Ջաւէն Արգումանեան, նշվ. աշխ., էջ 101:

³⁶ Նախքան մեկնելը պարզ չէր՝ նստավայրը Վանն էր լինելու, թե Բիթլիսը:

³⁷ Մ. Մ. Էպլիդաթեան, նշվ. աշխ., էջ 107:

մանյան սահմանադրության հերթական տարեդարձի օրը, կուսակալ Թահսինը, ի հեճուկս Հոֆի, Թուրքիայի կյանքում 1908 թ. սահմանադրությունն արժևորելու համար Վանի մոտակայքում՝ մի սարահարթի վրա, կազմակերպում է վագրի և ձիարշավի մրցումներ, որի համար հաստատում է կարևոր մրցանակներ (առաջին մրցանակը՝ 100 օսմանյան ոսկի): Միջոցառմանը ներկա էին ինչպես Հեքքեարի կառավարիչ Ջևդեթը, այնպես էլ Վանում Իտալիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի և Գերմանիայի փոխհյուպատոսները և հյուպատոսները³⁸:

Մի քանի օր անց Վան հասան Ն. Հոֆի անձնակազմի երեք ներկայացուցիչներ՝ գրասենյակային գործերը կազմակերպելու համար: Նրանցից երկուսը թուրք էին, իսկ մեկը՝ հայ՝ Աստիկ Կյոզուպեյոյանը: Նրանց հաջորդեց Բադեշի դատարանի նախագահը³⁹: Ընդհանուր առմամբ նրա անձնակազմը բաղկացած էր երեք հայ, երեք եվրոպացի և երեք թուրք պաշտոնյաներից: Ն. Հոֆի օգնական էր նշանակվել Տիգրանակերտի վալին⁴⁰: Նրան ուղեկցում էին իր անձնական քարտուղար Բլերը, թիկնապահը՝ հարյուրապետ Գրեյլը⁴¹ և իրավաբան Օլաֆ Դալը⁴²: Անձնակազմի մեջ էին նաև նրա ծախսատար Հայկ Սանոյանը և բիթլիսցի մի հայ խոհարարապետ⁴³:

Ն. Հոֆը դեռ Կարին չէր հասել, երբ պայթում է Առաջին աշխարհամարտը, իսկ Թուրքիան էլ արևելյան Թրակիայում, դեռ պատերազմի մեջ չմտած, զորաշարժ է հայտարարում:

Օգտագործելով հարմար առիթը՝ կուսակալ Թահսինը, որը զբաղված էր Վանի նահանգի հողերի բռնագրավումների խնդրով, հեռագիր է հղում Թալեաթին ժամանակավորապես փոխարինած Ջավիդ բեյին⁴⁴՝ առաջարկելով, որ Ն. Հոֆը Կարինից այն կողմ չանցնի, քանի որ գործերի խառնաշփոթության պատճառով «ո վ պիտի զբաղվի իրեն հետ»⁴⁵:

Մահմեդական ժողովուրդները հաճույքով հետևում էին, թե քրիստոնյա պետություններն ինչպես էին իրար բզկտելու: Իսկ Վանի թուրքական պաշտոնեությունը և մահմեդական ազգաբնակչությունն անհանդուրժելի էին համարում այն, որ եվրոպացի ինչ-որ օտարական (խոսքը Հոֆի մասին է) «իր «պիղծ» ոտքերով պիտի չգար աղարտելու թրքական վարչութիւնը, եւ լորճելու իրենց մաքրամաքուր իշխանութիւնը»⁴⁶:

Թահսինի հեռագրից մեկ օր անց Ջավիդը մի նոր հեռագրով դի-

³⁸ Տե՛ս նույն տեղը, էջ 107-108:

³⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 107, 109:

⁴⁰ Տե՛ս «Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար», ԺԱ հատոր, էջ 131, 407:

⁴¹ Տե՛ս Մ. Մ. Բայլիդաթեան, նշվ. աշխ., էջ 113:

⁴² Տե՛ս Մ. Ե. Մարտիրոսյան, նշվ. աշխ., էջ 179:

⁴³ Տե՛ս Մ. Մ. Բայլիդաթեան, նշվ. աշխ., էջ 130:

⁴⁴ Թալեաթն այդ օրերին գտնվում էր Սինայայում (Ռումինիա)՝ բանակցություններ վարելու նպատակով:

⁴⁵ Մ. Մ. Բայլիդաթեան, նշվ. աշխ., էջ 110:

⁴⁶ Նույն տեղում:

մում է Ն. Հոֆին՝ առաջարկելով Կարինից վերադառնալ Կ.Պոլիս: Սակայն Ն. Հոֆը կարևորություն չտալով նախարարի հրահանգին, շարունակում է իր ճանապարհը դեպի Վան: Այդ մասին Ն. Հոֆը հիշում է. «Երբ ռուսական դեսպան Պ. Կիրսին ներկայացայ, ան ինձի երկարօրէն խօսեցաւ իմ առաքելութեանս եւ ընդհանուր կացութեան մասին, եւ մասնաւորապէս յանձնարարեց, որ եթէ թուրք կառավարութիւնը, ճամբու ընթացքին կամ պաշտօնատեղիս հասնելէ ետք՝ ինձի հրահանգէ ետ վերադառնալ, առանց տեղական հիւպատոսին միջոցով իր կարծիքը հարցնելու՝ տեղէս չչարժիմ»⁴⁷:

Այս անգամ կուսակալը նոր հեռագիր ուղարկեց Ջավիդին՝ հայտնելով, որ ներկա քաղաքական իրավիճակում և գորաշարժի հետևանքով ժողովուրդը «գերագրգռուած» է, և ինքը պատասխանատվություն չի կարող ստանձնել այն անպատեհությունների համար, որոնք կարող էին ծագել Վանում Ն. Հոֆի ընդունելության և բնակության ժամանակ⁴⁸:

Օգոստոսի 4-ին (5-ին)⁴⁹ «անպաշտոն» ընդունելությամբ իր նստավայր Վան է հասնում մարզպան Ն. Հոֆը⁵⁰: Նահանգապետ Թահսին բեյը, որն իթթիհատի ազդեցիկ թուրքերից էր, նրան կարևորություն չի տալիս և միայն քաղաքի մոտակայքում՝ Ավանցում, դիմավորելու է ուղարկում վիլայեթի մեքթուփչիին՝ թարգման Արմենակ էֆենդիին: Այս անտարբերությունը գերծ չի մնացել դիվանագիտական դիտարկումներից: Տրապիզոնում Իտալիայի գլխավոր հյուպատոս Գորրինին Իտալիայի արտաքին գործերի նախարար Սան Ջուլիանոյին 1914 թ. սեպտեմբերի 14-ին հղած իր թիվ 858/81 հեռագրում նկատում է, որ Հոֆը «Վան էր եկել օգոստոսի 17-ին և շատ վատ էր ընդունվել: Նրան դիմավորելու չէին եկել անգամ տեղական իշխանությունների ներկայացուցիչները»⁵¹:

Խոսելով Հոֆի վատ ընդունելության մասին՝ Ս. Վրացյանը Հ. Յ. Դ. Ամերիկայի կենտրոնական կոմիտեին 1914 թ. օգոստոսի 12/25-ին Կարինից նամակ էր հղել, որում նշում էր. «...խեղճ Հոֆը եկավ Կարին ու անցաւ Վան, բայց վրան նայող չեղաւ, Վանի մէջ իր պաշտօնէաները մնացել են առանց ուշադրութեան եւ ստիպուեր են «օթել»-ի մը մէջ տեղաւորուիլ... »⁵²:

Այդ մասին են փաստում նաև Վատիկանի արխիվի տեղեկությունները⁵³:

⁴⁷ Նույն տեղում, էջ 131:

⁴⁸ Տե՛ս նույն տեղը, էջ 110-111:

⁴⁹ Տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 1914 թ., օգոստոսի 22, թիվ 183:

⁵⁰ Տե՛ս **Հ. Կոստյան**, Վան-Քաղաքամիջի Ապրիլեան կռիւները, Եր., 1992, էջ 7:

⁵¹ «Իտալիայի Արտաքին գործերի նախարարության պատմական դիվանագիտական արխիվի վավերագրերը Հայկական հարցի մասին 1913-1923 թթ.», հատոր Ա, 1913-1917, էջ 136:

⁵² «Նիթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար», ԺԱ հատոր, էջ 131:

⁵³ Տե՛ս **Georges-Henri Ruysse SJ**, La questione Armena, vol. III, 1908-1925, Documenti dell' archivio della congregazione per le Chiese Orientali (ACO), Roma, 2014, էջ 12:

Մինչդեռ ընդամենը մեկ օր առաջ, երբ Վան ժամանեց քրդական «համիդիե» հեծելազորը քրդական շեյխերից մեկի գլխավորությամբ, կառավարությունը նրան դիմավորեց երաժշտությամբ, որի համար էլ ժամանակի մամուլն արձանագրեց, որ «քիւրտերուն աւելի պատիւ կայ, քան թէ քրիստոնէայ Հոֆին»⁵⁴:

Ն. Հոֆի ժամանումը Վան անցանկալի ընդունելության արժանացավ նաև մահմեդական ազգաբնակչության կողմից: Այդ մասին Ա. Չոպանյանը հիշում է. «...բայց հազիւ հասած էր հոն, և ահա մահմեդական խուժանը սկսաւ փողոցին մէջ զայն հայիւշներով պաշարել, թշնամական ու գրեթէ սպառնալից նայուածքներ արձըկել անոր, այնպէս որ իրեն ընկերացող թուրք ժանտարմներէն մին ստիպուէր է դառնալ դէպի խուժանը (այս բոլորը կարդացի թղթակցութեան մը մէջ գորականատես վկայ մը մէջ Թիֆլիսի «Մշակ» լրագրին դրկած է) և անոր ուղղել սա խօսքերը ի՞նչ կայ այդպէս մրմռալու և իրար անցնելու: Հանդարտեցէք: Լեռնէն իջած արջ մը չէ, ճանավար մը չէ, մարդ մըն է»⁵⁵:

Նախապէս որոշված էր Ն. Հոֆին որպէս կեցության վայր հատկացնել ասորիների Վանի առաջնորդարանը: Սակայն նախնական կազմակերպչական պայմանավորվածությունները մի կողմ դրվեցին: Դեռևս Արձեշում գտնված ժամանակ Ն. Հոֆին էր հանձնվել Ջավիդի հեռագրի պատճենը, ըստ որի՝ հանձնարարվում էր նրան կանգ չառնել Վանում, այլ հաստատվել մոտակայքում, մինչև որ «յառաջիկային եւ համաձայնաբար անհրաժեշտ կարգադրութիւնը ըլլար»⁵⁶:

Միաժամանակ, Ջավիդը ստիպված հեռագրում է Վանի իշխանություններին, որ «հարկ եղած աջակցութիւնը եւ պատիւր ընծայէին անոր»⁵⁷:

Ն. Հոֆը, որ սպասում էր լավ ընդունելության և վերավորված էր իշխանությունների վերաբերմունքից, կանգ չի առնում քաղաքում, այլ տեղափոխվում է Արտամետ՝ հաստատվելով իր հետ բերած մոմլաթե վրանների տակ, որոնք «սելիլոփտ ապակիներով պատուհաններ ունէին: Կը պարունակէին ճանճարգելով շրջապատուած զինուորական մահճակալներ, բացուող-գոցուող սեղաններ եւ աթոռներ, նոյնիսկ լոգանքի տաշտեր: Յատակը սփռուած կանաչ մոմլաթ մը գորգի դեր կը կատարէր: Այս բոլորը քաղաքին ամենալաւ սենեակներէն աւելի հանգստաւէտ կը դարձնէին վրանները»⁵⁸: Այնտեղից նա անպատշաճ երկտողով նահանգապետին հայտնում է, որ պաշտոնապէս քաղաք պետք է այցելի: Դա մի ցուցմունք էր կարգը զանց առնող կուսակալին: Նամակն ունենում է խիստ ազդեցություն և օգոստոսի 9-ին կառավարական շենքի մոտ Ն. Հոֆին դիմավորում են գորքը,

⁵⁴ «Հորիզոն», Թիֆլիս, 1914 թ., օգոստոսի 22, թիվ 183:

⁵⁵ Ա. Չոպանեան, նշվ. աշխ., էջ 37:

⁵⁶ Մ. Մ. Էպլիդաթեան, նշվ. աշխ., էջ 111:

⁵⁷ Նույն տեղում, էջ 111:

⁵⁸ Նույն տեղում, էջ 115:

բարձրաստիճան պաշտոնյաները և հայերը, որոնք չեն թաքցնում իրենց ուրախությունը:

Ըստ ժամանակակիցների վկայության՝ Ն. Հոֆը հանդիպման է ներկայանում օսմանյան պետական պաշտոնյայի խորհրդանշան ֆեսը գլխին: Ահա թե ինչպես է ներկայացնում Ն. Հոֆին Մ. Էպլիդաթյանը. «...Վանի շրջանը գալիք անձը աւելի մեղմ, աւելի հաշտարար բնւորութեան տէր է... Միջահասակէն քիչ մը բարձր, 45-46 տարեկան, բուսական առոյգ, արեւակեզ դէմքով, պարզ մարդու մը երեւոյթն ունէր»⁵⁹:

6-7 րոպե տևած հանդիպումից հետո Ն. Հոֆը վերադառնում է Արտամես: Հանդիպմանը ներկա Մ. Էպլիդաթյանը հիշում է. «Հոն հազիւ օշարակ մը առած՝ 6-7 րոպե մնացին: Կուսակալը ներողութիւն խնդրեց որ զօրաշարժի բացառիկ աշխատանքը իրեն արգելք եղած էր դիմաւորելու պարտականութիւնը լաւագոյն ձեւով կատարելու համար: Հօֆն ալ տաքէն եւ ճամբու նեղութենէն խօսեցաւ, եւ բաժանուեցան»⁶⁰:

Իր հերթին օգոստոսի 22-ին (նոր տոմարով) Թահսինն է այցելում Ն. Հոֆին, որի նստավայրը Վանից երկու ժամվա հեռավորության վրա էր գտնվում⁶¹:

Հաջորդ օրը Ն. Հոֆը կրկին մեկնում է Վան և Թահսինին ներկայացնում բարենորոգումների ծրագիրը և պահանջում այն գործադրել: Այս մասին Մ. Էպլիդաթյանը հիշում է. «Պոլսէն ստացուած տեղեկութիւններու համաձայն Հոֆը բաղդատմամբ Վէսթէնէնկին՝ աւելի մեղմ կը գտնէին: Շատ չանցած սակայն հասկցայ, որ ատիկա ճիշտ չէր: ...Կ'երեւի կուսակալն ալ ինծի պէս մեղմ մարդու տեղ դրած էր մարգպանը, եւ կը կարծէր թէ կրնար ուզածին պէս խաղալ անոր հետ: Ուրքա՛ն մեծ եղաւ իր զարմանքն ու կատաղութիւնը, երբ դիւանապետ Պլէր յստակ եւ հատու արտայայտութեամբ մը ծրագիրը ներկայացուց Թահսինին...»⁶²:

Այդ ամենից սարսափած կուսակալը շտապում է հեռագիր հղել ներքին գործերի նախարարություն՝ իր մտահոգությունը հայտնելով, որ ամեն տեսակ ձևականություններ հոռի տպավորություն են թողնում և կարող են առաջ բերել ժողովրդական հուզումներ: Եվ եթե կառավարությունը Ն. Հոֆին հետ չկանչի, ապա խնդրում է ընդունել իր հրաժարականը⁶³: Ենթադրելի է, որ կառավարությունը կարևոր որոշում չկայացրեց, քանի որ հաջորդ օրը կուսակալը Ն. Հոֆին հրավիրեց պաշտոնական ընդունելության, որին մասնակցում էին Վանի կրոնական գործերի դատավորը (գատրն), զինվորական հրամանատարը, դատավոր-

⁵⁹ Նույն տեղում, էջ 107, 113:

⁶⁰ Նույն տեղում, էջ 115:

⁶¹ Տե՛ս «Բտալիայի Արտաքին գործերի նախարարության պատմական դիվանագիտական արխիվի վավերագրերը Հայկական հարցի մասին 1913-1923 թթ.», էջ 136:

⁶² Մ. Մ. Էպլիդաթեան, նշվ. աշխ., էջ 116:

⁶³ Տե՛ս նույն տեղը, էջ 117:

ները, ելնմտական տնօրենը, վարչական ճյուղերի պետերը, 800 զինվորականներից բաղկացած վաշտը, ինչպես նաև հայ, թուրք և քուրդ երևելիները:

Իր ելույթի ժամանակ եվրոպացի տեսուչը հավաստիացրեց, որ մեծ պետությունների որոշումով և օսմանյան կառավարության հավանությամբ նա ժամանել է Վան բարենորոգումների ծրագիրը գործադրելու համար: Նա վստահեցրեց նաև, որ յուրաքանչյուր անհատ և ժողովուրդ իր համար նույն արժեքն ունեն, և որ բոլորն օրենքի առաջ հավասար են: Մարզպանը կարևորեց նաև արդարության և ապահովության երաշխավորման անհրաժեշտությունը ու վճռականություն հանդես բերեց այն գործադրելու համար՝ բացառելով ցանկացած քմահաճ վերաբերմունք⁶⁴:

Նախատեսվածի համաձայն՝ մարզպանը կառավարական ընդունելությունից հետո չորս-հինգ կառքերով, ձիավոր 40-50 ոստիկանների և ոստիկան-զինվորների ուղեկցությամբ ու կուսակալի դիվանապետի և ոստիկանության տնօրենի ընկերակցությամբ Այգեստանում այցելեց հյուպատոսներին, որից հետո քաղաքամիջում՝ Վանի հայոց առաջնորդարանի շենքում հանդիպեց վանեցիներին:

Պատվիրակության երթևեկը ապահովելու պատրվակով արգելվել էր ժողովրդի ներկայությունը փողոցներում: Սակայն անհնար էր եղել արգելել տների մուտքերի և տանիքների վրա 4.000-5.000 հայ բազմության առկայությունը, որոնք «մեքթուպձիին եւ ոստիկանութեան տնօրենին ծանր նայուածքին տակ» ուրախությամբ ծաղիկների փնջերով ողջունում էին Ն. Հոֆի ներկայությունը Վանում⁶⁵:

Հայերը պատրաստվել էին ընդունելության: Մարզպանին ճաշկերույթի հրավիրելու համար նախապես Արտամեստ էր գնացել Ավետիս Թերզիբաշյանը: Վանեցիները Ն. Հոֆին դիմավորեցին առաջնորդարանի մուտքի մոտ: Այդ մասին Մ. Էպլիդայանը հիշում է. «Առաջնորդարանի դրան առջեւ, իսկապէս մեծ դժուարութեամբ մեզի ճամբայ բացուեցաւ: Վարժապետանոցի ֆանֆարի խումբը արդէն տեղ բռնած էր, եւ կ'երեւի նախապէս պատրաստուած յայտագրի հիման վրայ, ամենէն առաջ Հնչակեանները սկսան երգել Տալուրիկի երգը: Հօֆ կամաց մը ինծի հարցուց թէ ի՞նչ երգ է այս - «Ազգային երգ մըն է» - ըսի: Երբ Առաջնորդարանի դռնէն ներս մտանք, այս անգամ Ռամկավարներու որդեգրած եւ յետոյ Ազգային Սահմանադրութեան նուիրուած երգը սկսաւ: Քիչ մը ետք սանդուխներէն դէպի սրահ ուղղուած միջոցին Դաշնակցականներու «Անդրանիկը քաջ» երգուեցաւ: Հոֆ երեսս նայեցաւ, եւ կարծեցի թէ նորէն հարցում մը պիտի ընէր: Բայց ո՛չ, ժպտալով ըսաւ - «Գիտեմ այդ անունը»: Սրահին մէջ, ոտքի վրայ, ներկաները մի առ մի ներկայացուեցան: Աւանդական սուրճէն եւ թէյէն ետք, Իշխանը կանգնեցաւ եւ

⁶⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 117-118:

⁶⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 118-119:

սկսաւ խօսիլ: Կարծես աչքերէն կրակ կը ցայտեր: Ըսաւ. «Դուք 5-6 տարիէ ի վեր մեր սպասած Մեսիան եք: Այս տառապակոծ ժողովուրդը, իր ազատութեան պայքարէն վերջ, ահա կը տեսնէ արշալոյսը»: Պախարակեց Օսմանեան ռեժիմը, առանց բառերը ծամծմելու»⁶⁶:

Մարգպանը նստած տեղից կարճ նախադասություններով պատասխանեց Իշխանին՝ խոստանալով անաչառորէն քննել իրեն ներկայացված բոլոր հարցերը:

Ն. Հոֆին ցույց տրված հայերի շքեղ ընդունելությունը կուսակալի սրտով չէր, որի համար նա հայերին հայտնում է իր դժգոհությունը:

Պաշտոնական ընդունելությունից մի քանի օր անց՝ օգոստոսի 16-ին (ըստ Ն. Կոստյանի՝ օգոստոսի 14-ին)⁶⁷, Ներքին գործերի նախարար Թալեաթը հեռագրով դիմում է Ն. Հոֆին և նրան ետ կանչում Կ.Պոլիս՝ պատճառաբանելով, որ պատերազմի պատճառով երկրի կյանքը բնականոն չէ, որ ներկա պայմաններում ընդհանուր քննիչը ոչ միայն օգտակար գործունեություն չի կարող ծավալել, այլև Վանի մեջ մնալը որոշ անպատեհություններ կարող է առաջ բերել, և որ անգամ Լ. Վեստենենկը դեռ չի մեկնել իր պաշտոնատեղին: Հետևաբար նպատակահարմար չէր բարենորոգումների ծրագրի գործադրումը: Թուրքական կառավարությունը փաստացի չեղյալ էր հայտարարում ռուս-թուրքական համաձայնագիրը բարենորոգումների մասին⁶⁸:

Այդ ժամանակ Ն. Հոֆը Արտամետում էր և պատրաստվում էր քննելու Խարբերդից ստացված իր առաջին վիճահարույց գործը, որի հեղինակը թուրք էր: Մակայն խորհրդակցելով Վանի ֆրանսիցի և ռուս հյուպատոսների հետ՝ նա որոշեց լքել Վանը:

1914 թ. օգոստոսի 17-ին Հոֆը թողնում է Արտամետը և առանց Վան մտնելու Կարճկան գավառի վրայով կուսակալի տրամադրած 30 ժանդարմների և 10-15 ոստիկանների ուղեկցությամբ Ոստանի կայմակամի առաջնորդությամբ ուղևորվում է Բիթլիս: Ախավանքում⁶⁹ նրան է հանդիպում մեծանուն նկարիչ Փ. Թերլեմեզյանը, որը հիշում է. «...Հոֆ բեյը Վանի ծովի հարավային ափով Պոլիս վերադառնալիս հաջորդ օրը Ախավանք ժամանեց իր շքախմբով: Ոստանի կայմակամը և զորաց հազարապետը ընկերակցում էին վերատեսչին: Կայմակամը ինձ ծանոթացրեց Հոֆ բեյին, բայց միշտ աշխատեց խանգարել, որ մենք առանձին խոսակցություն չկարողացանք ունենալ: Նույնիսկ երբ կաթողիկոս-

⁶⁶ Նույն տեղում, էջ 119:

⁶⁷ Տե՛ս Ն. Կոստյան, նշվ. աշխ., էջ 7:

⁶⁸ Տե՛ս Լ. Հովհաննիսյան, Հայկական հարցը և Մեծ տերությունները 1914-1917 թվականներին, Եր., 2002, էջ 37:

⁶⁹ Ախավանքը կամ Աղթամարի վանքի «դրսի տունը» ամենամոտ ցամաքն էր, որտեղ ծովափնյա աղբյուրի մոտ, պտղատու այգիների և բանջարանոցների հարևանությամբ, կառուցված էին երկհարկանի տներ, դպրոց, շտեմարաններ, ախոռներ և մարագներ: Այնտեղ էր նստում կաթողիկոսական փոխանորդը, որի հսկողության տակ հավաքվում էր թեմի ողջ եկամուտը (ոչխարներ, մատակներ, կարագ, սեր, մեղր, ցորեն, տարեկան, կտավատ, կանեփ, այգիների և բանջարանոցների բերքի մի մասը):

ասկան տեղապահը մի ճոխ սեղանով պատվեց հյուրերին, գայնագամը նստեց իմ և Հոֆի մեջտեղը լսելու համար մեր ֆրանսերեն խոսակցությունները: Ճաշից հետո դուրս եկանք ծովեզերյան այգին, ահա այնտեղ էր, որ Հոֆ բեյը ինձ մոտեցավ և մենք դյուրություն ունեցանք հինգ րոպեի չափ խոսակցելու: Ես նրան հարցրի, թե արդյոք ճիշտ է, որ Թալաթ փաշայից ձեր Պոլիս վերադառնալու համար հեռագիր էք ստացել, ասաց. «Այո, բայց ինչո՞ւ էք հարցնում»: Պատասխանեցի, թե կարծեմ այդ նշան է, որ տակավին կայունացած չէ մեր քաղաքական կացությունը: Նա ժպտալով ասաց. «Թե՛ ինք և թե՛ Վեստենենկը բոլորովին անկախ են թուրք կառավարությունից, և մեծամեծ բարենորոգումներ պիտի կատարվին հայկական նահանգներում, ուր օրենքները ճշմարտությամբ պիտի գործադրվեն և թե երկիրը տնտեսապես պիտի բարգավաճի»: Հետո անմիջապես ավելցրեց. «Ես արդեն մի քանի միլիոն ֆունտ մայրիի և կաղնի ծառերի սերմեր եմ պատվիրել Նորվեգիայում, որ այդ բլուրները (իր երկար թևը պարզելով դեպի մեր բուսականությունից գուրկ լեռները) բոլորն էլ անտառապատվեն»⁷⁰ և այլն:

Բիթլիսից Ն. Հոֆն անցնում է Տիգրանակերտ, Դիարբեքիր, Եդեսիա⁷¹, Հալեպ, Բեյրութ և ավստրիական «Լոյդ» նավով վերադառնում է նախ Իզմիր, ապա Կ.Պոլիս: Ռոստոմը Հայաստանի բյուրոյի Կ.Պոլսի հատվածին Կարինից ուղղած 1914 թ. օգոստոսի 24-ի իր նամակում ցուցում էր տալիս Արմեն Գարոյին Կ.Պոլսում լավ ընդունելություն ցույց տալ Ն. Հոֆին⁷²:

Ն. Հոֆը մտադրություն ուներ այցելելու Ալեքսանդրիա և տեսակցել Պողոս Նուբարի հետ, որի հետ առիթ էր ունեցել հանդիպելու Փարիզում նախքան իր առաքելության սկիզբը⁷³, սակայն դեպքերի ընթացքն այլ կերպ դասավորվեցին, և նա, վերցնելով վեցամսյա արձակուրդ, մեկնեց Նորվեգիա:

Ն. Հոֆը կարող էր վերադառնալ ավելի կարճ՝ Վան-Բերկրի-Բայազետ-Իզմիր ճանապարհով: Սակայն ո՞րն էր ավելի երկարատև և վտանգավոր ճանապարհով վերադառնալու շարժառիթը: Այդ հարցի պատասխանը մենք գտնում ենք Մ. Էպլիդայթյանի հուշերում: Պարզվում է, որ Ն. Հոֆը որոշակի հանձնարարական ուներ Կ.Պոլսի ռուս դեսպան Գիրսից, որի նպատակն էր հետդարձի ճանապարհին տեղեկություններ հավաքել հայերի և ընդհանրապես Թուրքիայի ներքին կացության վերաբերյալ՝ հետագայում տեղեկագիր ներկայացնելու համար⁷⁴:

⁷⁰ Փ. Թերլենեզյան, Կյանքիս հուշերը, Եր., 2017, էջ 301:

⁷¹ Եդեսիա-Ուրֆայում քաղաքի պարետը նրան հատկացրեց պահակախումբ (տե՛ս Զ. Կյունցլեր, Արյան և արցունքների երկրում: Իրադարձությունները Միջագետքում Համաշխարհային պատերազմի ժամանակ, Եր., 2011, էջ 18):

⁷² Տե՛ս «Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար», ԺԱ հատոր, էջ 136:

⁷³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 58, թ. 61:

⁷⁴ Տե՛ս Մ. Մ. Էպլիդայթեան, նշվ. աշխ., էջ 131:

Այսպիսով, ավարտվեց Ն. Հոֆի մոտ երկշաբաթյա գործունեությունը Վանում: Ինչպես 1908 թ. երիտթուրքական հեղաշրջումը փրկեց Օսմանյան Թուրքիան մասնատումից, այնպես էլ Թուրքիայի պատերազմի մեջ մտնելը ձախողեց հայկական բարենորոգումների խնդիրը:

Ամփոփելով իր կարճատև գործունեության արդյունքները Ն. Հոֆը Մ. Էպլիդայանի հետ ունեցած իր զրույցում խոստովանել է. «Մեր առժամեայ ձախորդությունը պատճառ եղաւ որ ես աւելի շուտ եւ աւելի լաւ հասկնամ կացութիւնը: Հայերը երբեք չեն չափազանցած: Բայց ի՛նչ կորով եւ դիմադրական ուժ ունին ձերիսները, որ դարերու ընթացքին եթէ թիւի համեմատական աճում չեն ունեցած, եւ սակայն չեն լքած, չեն ընկճուած, չեն չքացած, եւ մանաւանդ իրենց ինքնուրոյն յատկութիւնները չեն կորսնցուցած»⁷⁵:

Բանալի բառեր – *հայկական բարենորոգումներ, տեսուչներ, Հոֆ, պատերազմ, Վան*

АВЕТИС АРУТЮНЯН, ЛЕВОН СИМОНЯН, АРШАК БАЛЯН – Деятельность Н. Гофа в Ване. – В статье освещается двухнедельное пребывание в Ване Н. Гофа, одного из пяти инспекторов, предусмотренных программой реформ в Османской империи. 2 апреля 1914 г. двое из них – голландец Л. Вестенек и норвежец Н. Гоф – были утверждены. Генерал Гоф долгое время занимал на родине серьёзные военные и административные посты и преподавал юридические дисциплины в высшей военной школе. Как администратор он отличался излишней мягкостью.

4 августа Гоф прибыл в Ван. Мусульманское население встретило его настроенно, тогда как армяне, много ждавшие от его миссии, – с восторгом. Инспектор поселился в селе Артамет близ города и, представив губернатору Вана программу реформ, потребовал исполнить её. Но уже 16 августа министр внутренних дел Талаат-паша отозвал его в столицу, объяснив это тем, что в условиях войны деятельность генерального инспектора будет носить ограниченный характер и, мало того, способна причинить ущерб. На следующий день генерал Гоф оставил Артамет и, не заезжая в Ван, отправился в Константинополь.

Ключевые слова: *армянские реформы, инспекторы, Гоф, война, Ван*

AVETIS HARUTYUNYAN, LEVON SIMONYAN, ARSHAK BAILYAN – N.Hof's Activity in Van. – Though Turkey had signed the program of reforms, it bargained the question of inspector's choice. Finally on April 2, 1914, among the five candidates suggested by the states, only two were chosen: the Dutch L. Vestenenk and the Norwegian N. Hof. L. Vestenenk was appointed as the inspector of the A region, and N. Hof was selected for the B region. The article presents N. Hof's two weeks activity. Hof was a bachelor colonel who had military and administrative positions.

In 1910 he worked in the Ministry of Defence of the country as the state secretary

⁷⁵ Նույն տեղում, էջ 135:

and also taught jurisprudence at the Norwegian military school. In the administrative activity, he was a very mild and inexperienced person.

On August 4, 1914, N. Hof who was at that time the leader of the region arrived at his seat Van without any acceptance. The Muslim population unpleasantly accepted his arrival to Van, whereas Armenians greeted him in a luxury way.

Luxury it was decided beforehand that Hof should be settled in the residence of Van. But he moved to Artamet. Hof then presented to the governor of Van Tahsinin the program of reconstructions and demanded it to be put into action.

But on August 16 the minister of internal affairs Talaat sent a telegram to Hof, asking him to return to Constantinople, motivation that the life of the country was out of rhythm because of war. He added that under such conditions the general inspector could not only be useless in his activity but could also cause trouble by his settlement in Van.

On August 17, 1914, N. Hof left Artamet and moved to Bitlis from Kartchkan without entering Van. From there he first returned to Izmir and then to Constantinople across Tigranakert, Diarbekir, Yedesia, Halep and Beirut.

Key words: *Armenian reforms, inspectors, Hof, war, Van*